ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2026թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավանի 6-րդ փողոցը (սկսվում է Ավանի 3-րդ փողոցից, հատելով Ավանի 5-րդ և Մարշալ Խուդյակովի փողոցները, հասնում Դավիթ Մալյան փողոց), 1-ին և 2-րդ նրբանցքներն անվանակոչել հայ անվանի հոգեբան, մանկավարժ, հասարակական գործիչ Գուրգեն Էդիլյանի անվամբ՝ «Գուրգեն Էդիլյան փողոց», «Գուրգեն Էդիլյան փողոց, 1-ին նրբանցք» (սկսվում է Ավանի 6-րդ փողոցից, կիսաշրջան կազմելով հասնում Ավանի 6-րդ փողոցի հ.16 հասցեի հարակից տարածք):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ անվանի հոգեբան, մանկավարժ, հասարակական գործիչ Գուրգեն Էդիլյանը ծնվել է 1885թ. դեկտեմբերի 25-ին, Իջևանում:

Էդիլյանը սովորել է Քարավանսարայի ծխական, իսկ 1896–1898 թվականներին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներում:

1898–1903 թվականներին սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի լսարանական բաժնում:

1904 թվականին մեկնել է արտասահման, սովորել Ենայի (Գերմանիա), Լայպցիգի (Գերմանիա) և Բեռնի (Շվեյցարիա) համալսարաններում: Այնտեղ մուտք է գործել տեղի գիտական միջավայր՝ ծանոթանալով Վիլհելմ Վունդտի, Հերման Էբինգաուզի, Շոնստ Մյոյմանի հետ:

1909 թվականին փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան է ստացել՝ պաշտպանելով «Ցիլլերի ֆորմալ աստիճանների քննադատություն» թեմայով աշխատությունը, որը 1912 թվականին հայերեն տպագրվել է Էջմիածնում: Ուսումն ավարտելուց հետո Էդիլյանը վերադարձել է Հայաստան:

1914–1919 թվականներին աշխատել է Ներսիսյան դպրոցում: 1916 թվականից՝ պատերազմական ծանր տարիներին, եղել է Կովկասի գաղթականական որբանոցների տեսուչ, կազմակերպել անապաստան երեխաների կրթության և դաստիարակության գործը: 1918 թվականին Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ստանձնել է հանրապետության տարրական դպրոցների տեսուչի պարտականությունները: Հանդիսացել է Երևանի պետական համալսարանի հիմնադիրներից, համալսարանի մանկավարժության ու հոգեբանության առաջին դասախոսը:

1921 թվականին էդիլյանը հրավիրվել է համալսարան և նշանակվել մանկավարժական ֆակուլտետի դեկան: 1922–1925 թվականներին աշխատել է Ամերկոմի դպրոցների վերատեսուչի պաշտոնում: 1928–1933 թվականներին կրկին աշխատել է պետական համալսարանում, դասավանդել հոգեբանություն, մայրենի լեզվի մեթոդիկա:

1934–1937 թվականներին զուգահեռ աշխատել է նաև Մոսկվայի պետական Մորիս Տորեզի անվան մանկավարժական ինստիտուտի էքսպերիմենտալ ֆոնետիկայի և հոգեբանության լաբորատորիայում:

Ուսումնասիրել է ուսուցման տեսությունը, ընդհանուր և մանկավարժական հոգեբանությունը, զբաղվել հայոց լեզվի դասավանդման, մեթոդաբանության, դպրոցական դասագրքերի և ձեռնարկների ստեղծման, դատական հոգեբանության, գեղարվեստական երկի հոգեբանական վերլուծության, հայկական տառատեսակների և նրանց դյուրընթեռնելիության հարցերով: Հեղինակ է եղել հոգեբանության, մանկավարժության,

մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկային, հայ գրականության պատմությանը վերաբերող մի շարք աշխատությունների:

Էդիլյանը եղել է առաջին մանկավարժ հոգեբանը, ով Հայաստանում դրել է հոգեբանական գիտական մտքի էքսպերիմենտալ (փորձառական) ուսումնասիրությունների հիմքերը, կազմակերպել է հոգեբանության կաբինետ ու գիտական լաբորատորիա և զբաղվել հոգեկանի ուսումնասիրմամբ ու մեկնաբանմամբ:

1937 թվականին Գուրգեն Էդիլյանը դարձել է բռնաճնշումների զոհ և աքսորվել:

Մահացել է 1942թ. հունվարի 18–ին աքսորավայրում՝ մերձբայկալյան Տայշետ բնակավայրի մոտ:

Հայ անվանի հոգեբան, մանկավարժ, հասարակական գործիչ Գուրգեն Էդիլյանի անվամբ Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Ավանի 6-րդ փողոցն անվանակոչելու առաջարկը ներկայացվել է նրա զավակ՝ Սուրեն Էդիլյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ